ԱՆ- ԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱԾԱՆՑՈՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ս. Ա. ԴԱԼՍՏՅԱՆ

Ժամանակակից հայերենի ածանցների գիտական առաջին լուրջ քննությունը տրված է մեծավաստակ հայագետ Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ։ Այդտեղ նկարագրվում են ածանցները, ի մի են բերվում նրանց ծագման ու առաջացման մասին տվյալները, բազմաթիվ արժեքավոր դիտողություններ են արվում ածանցման տեխնիկայի, ածանցվող հիմքերի, ստացվող բաղադրությունների բնույթի և ածանցմանն ու ածանցներին վերաբերող շատ այլ հարցերի մասին։

Հետագա ուսումնասիրությունները նվիրված են հիմնականում ածանցների ու ածանցավոր բաղադրությունների նկարագրությանը, երբեմն փաստական նոր նյութի ընդդրկմամբ։ Լեզվական իրակությունների հետազոտման նոր եղանակները հնարավորություն են տալիս շարունակելու ուսումնասիրությունները հատկապես ածանցման տեխնիկայի, ածանցավոր բաղադրությունների կառուցվածքային-բառակազմական կաղապարների, նախատիպ հիմքերի, բաղադրությունների բառակազմական նշանակությունների գոյացման և այլ խնդիրների ուղղությամբ։ Ներկայացվող հոդվածը նման ուսումնասիրության մի փորձ է։

Ժամանակակից հայերենի ան- *առաջին ածանց ունեցող բաղադրությունները, ըստ իրենց ձևույթային-բառակազմական բանաձևերի, բաժանվում են երկու խմբի. ա) բաղադրություններ, որոնց մեջ* ան-*ը հանդես է գալիս որպես նախատիպ հիմքի առաջին բաղադրիչ (կառուցվածքային բանաձևը՝ (*RB *կամ* RS*)* R. *օրինակ՝* անամոթաբար *(մեկնաբանվում է որպես անամոթ-աբար),* անասնաբույժ, անարժեքություն, անբանություն, անխզելիորեն, անփորձաբար *և այլն. բ) բաղադրություններ, որոնց մեջ* ան- *ածանցը (*R*) դրված է նախատիպ հիմքի (*S*) կամ նախատիպ արմատի (*B*) սկզբից (կառուցվածքային բանաձևը՝ (*RB *կամ* RS*), օրինակ՝* անազատ *(ան-ազատ),* անազդեցիկ, անարժանավոր, անբժշկելի, անընկօրինակելի *և այլն։*

Մնում է բառերի մի խումբ ևս, որի մեջ մտնող բաղադրությունները ձևականորեն կարող են մեկնաբանվել նախորդ երկու ձևով էլ, այսինքն՝ և՛ որպես RB *կամ* RS*, և՛ որպես (*RB *կամ* RS*)* R*։ Այդպիսի բաղադրություններից են՝* անակնկալորեն, անհիրաժեշտականություն, անանջատաբար, անհիշաշարություն, անտեսանելիորեն *և նման բառերը։*

Քննարկենք վերոհիշյալ խմբերի բառերի կառուցվածքը և իմաստագոյացման ընթացքը։

*Առաջին խմբի բառերի կառուցվածքային-բառակազմական բանաձևերից երևում է, որ այդ խմբի մեջ մտնող բաղադրությունները ամենաքիչը եռաբաղադրիչ են, այսինքն՝ նախատիպ հիմքերը (*անամոթ-, անասն- *և այլն) կազ-*

մրված են կա՛մ մեկ ածանցից ու մեկից ավելի արմատներից, կա՛մ մեկից ավելի ածանցներից և մեկ կամ ավելի արմատներից. մեկից ավելի ածանցներով ու մեկից ավելի արմատներով նախատիպեր լեզվական գործառույթյան մեջ չկան։ Կառուցվածքային բանաձևերը ցույց են տալիս, որ առաջին խմբի նախատիպ հիմքերը, որպես ինքնուրույն բաղադրություններ, նույնանում են երկրորդ խմբի բաղադրություններին և կքննարկվեն համապատասխան տեղում։

Պարզենք նախ այն բաղադրությունների խնդիրը, որոնք զուտ ձևական մոտեցման դեպքում կարող են մեկնաբանվել և՛ որպես RS, և՛ որպես SR կառուցվածքի բառեր։ Նման բաղադրություններ կազմվում են հետևյալ ածանցներով.

ան–...–արար (տալիս ենք բաղադրության առաջին և վերջին ածանցները), ինչպես՝ անզգուշարար, որ կարող է մեկնաբանվել որպես ան-զգուշարար և անզգուշ-արար, անգիտակցարար, անբոնաղատարար, անբարեխղճարար, անազնվարար և այլն։

ան–...–ական. անգիտակցական, անգաղափարական, անբնական և այլն։

ան–...–ապես. անարժանապես, անեռևութապես:

ան–...–ացի. անարդարացի:

ան–...–ելի. անզուգադրելի, անզսպելի, անդիմադրելի, անգերազանցելի:

ան–...–իչ. անգոճացուցիչ. անբավականացուցիչ:

ան–...–որեն. անզգալիորեն, անեռկմտորեն, անգիտակցորեն, անարդարորեն:

ան–...–ություն. անզիջողություն, անզգուշություն, անարտադրողականություն և այլն։ Երկակի մեկնության տեղիք են տալիս հատկապես այն բաղադրությունները, որոնց առանց ան–ի բառահատվածը լեզվում որպես ինքնուրույն, առանձին բառ գործածական է, ինչպես՝ ան-զգուշարար, ան-գիտակցական, ան–արժանապես. ան–արդարացի, ան-զգալիորեն և այլն։

Ակնհայտ է, որ նման բաղադրությունների՝ քննարկվող խմբերից որի՞ն պատկանելը զուտ ձևական–բառակազմական տեսակետից որոշել անհնարին է։ Միակ ելքը բաղադրության բառակազմական նշանակության բացահայտումն է, այսինքն՝ անհրաժեշտ է գտնել կազմության նախատիպը և պարզել նրա ու վերջին բաղադրիչի իմաստային փոխհարաբերությունը։ Վերցնենք, օրինակ, անզիջողականություն բաղադրությունը և այն ենթարկենք բառակազմական-ձևույթային վերլուծության։ Զուտ ձևույթային վերլուծությունը այստեղ մեզ օգնել չի կարող, որովհետև դրա միջոցով մենք զատում ենք միայն ձևույթային միավորները (ան-զիջ-ող-ական-ություն), առանց նրանց հարաբերությունը բաղադրության մեջ պարզելու։

Բառակազմական-ձևույթային վերլուծության դեպքում, բնականաբար, անզիջողականություն բառից զատվում է զիջ ձևույթը (արմատ), որը –ող ածանցի հետ կազմում է առաջին նախատիպ հիմքը՝ BR։ Այնուհետև, բառակազմական հաջորդ աստիճանում, հնարավոր է բաղադրել՝ զիջող–ական՝ (BR)R. այնուհետև՝ զիջողական–ություն՝ [(BR)R]R և ան-զիջողականություն՝ R{[(BR)R]}[1]։ Սակայն անզիջողականություն բաղադրությունը կարելի է մեկ-

[1] Փակագծերը բառակազմական բանաձևերում ցույց են տալիս բաղադրման աստիճանականությունը։

նարանել նաև այլ կերպ։ Նախ՝ զիջող նախատիպ հիմքից՝ ան-զիջող՝ R(BR), այնուհետև՝ տնդիջող-ական՝ [R(BR)]R և հետո միայն անզիջողական-ություն՝ {[R(BR)]R}R, որը և տվյալ բաղադրության բառակազմական-ձևությային հիշտ բանաձևն է, քանի որ բառը նշանակում է անզիջողական լինելը։ Իմաստագոյացման տեսակետից քննելով հիշյալ բաղադրությունները, տեսնում ենք, որ դրանց մի մասը ընդհանուր RS, մյուսները SR կառուցվածք ունեն։ Առաջին խմբին են պատկանում ան-...-ելի, ան-...-ական և ան-...-իչ ածանցումով բոլոր բաղադրությունները. օրինակ՝ ան-ենդծանելի, ան-դիմադրելի, ան-դաղափարական, ան-բանական, ան-անջատական, ան-բավականացուցիչ (հզվդ.), ան-դոհացուցիչ և այլն։ Երկրորդ (SR) խմբի մեջ են մտնում ան-...-ապես, ան-...-աբար, ան-...-որեն ածանցումներով բաղադրությունները, ինչպես և ան-...-ություն բաղադրությունների մեծ մասը. օրինակ՝ աներևութապես, աներևակայելիորեն, անհանդուրժողաբար, անվայելչաբար, անդարդացածություն, անզիջողություն և այլն։

Ասվածից բխում է, որ ելնելով բառերի՝ լեզվի տվյալ շրջանում գործուն իմաստից, հնարավոր է որոշել նրանց բառակազմական ո՞ր խմբին պատկանելը։ Վերցնենք անշինություն, անգիտություն և անտերություն բաղադրություններ։ Ակնհայտ է, որ այս բառերը կարող են հասկացվել երկու կերպ՝ անշեն լինելը, անտեր լինելը, անգետ լինելը և առանց շինության, առանց տերության, առանց գիտության։ Առաջին իմաստով կիրառությունները շատ անսովոր չեն արդի գրական հայերենում (Ջերմատան անշինությունը չի անհանդրստացնում աշխատակին, Ջարմանք է պատճառում բրիգադիրի անգիտությունը շինարարությունից)։ Երկրորդ իմաստով բառերը օգտագործվում են գերադանցապես խոսակցականում, որտեղից և երբեմն ներթափանցում են գրականության մեջ ու բառարաններ։ Ժողովրդական-խոսակցական կիրառություններ են անգրություն (Անգրություն ո՞ւր ես գնում, բան չի դուրս գա), անհաղորդություն (Խեղճը մեռավ անհաղորդություն), անկրթություն (Ընդունվեցի՛, հիմի էլ այսպես անկրթություն քարշ եմ գալիս) և այլն։ Բառարան է մտել անշինություն «Շինություն չունեցող, առանց շինության»։ Ժողովրդախոսակցական կիրառություններում, պարզ է, ունենք ան-գրություն, ան-հաղորդություն, ան-կրթություն (RS), իսկ գրականում (վերևի օրինակներում) անշին-ություն, անգիտ-ություն, անտեր-ություն (SR) կառուցվածքները։

RB կամ RS կառուցվածքային ընդհանուր բանաձև ունեցող բաղադրությունները կարող են կազմված լինել. 1. Ածանցից և նախատիպ արմատից. ինչպես՝ անազատ, անազնիվ, անամպ, անարատ, անկուշտ, անդարձ, անչար և այլն։ Նման բաղադրությունների կառուցվածքային բանաձևն է RB։ Նկատի պետք է ունենալ, որ բառակազմական հարացույցներում նման բաղադրությունները ազատորեն կարող են դիտվել որպես $(RB)R_0$ կառուցվածքի, այսինքն զրո բառակազմական ածանց ունեցող բաղադրություններով նախատիպեր։ Դա հատկապես դրսևորվում է ածանցների հոմանիշային շարքերում։ 2. Ածանցից և նախատիպ հիմքից (RS)։

Ըստ նախատիպ հիմքերի կազմության այս բաղադրություններն ունեն հետևյալ կառուցվածքային բանաձևերը՝

ա) R(BR), այսինքն՝ ան- ժխտական ածանցը դրված է մեկ արմատից և մեկ ածանցից բաղադրված նախատիպ հիմքի վրա։ Այսպիսի կազմություն ու-

նեն անալի. անալիf. անախորժելի, անաղուն. անանուն, անամրոց. անանձնական. անաշխարհիկ, անարգասավոր և այլ բառեր։

ր) R(BRR), որը կարող է ունենալ նաև R[(BR)R] տարբերակը։ Նման բաղադրություններ են՝ անանցանելի. անանցողական. անաղղեցիկ և այլն։ Տարբերակի կառուցվածքն ունեն անբուժակավոր (հզվդ.), անարժանավոր, անբաժանելի, անբանականություն և այլ բառեր։

գ) R(BRRR), որը կարող է ունենալ R{(BR)R]R} և R[BRR)R] տարբերակները. ինչպես՝ անանցանելիություն. անբաժանելիորեն. անզիջողականություն և այլն։

դ) R(BB), այսինքն՝ ածանցը դրվում է երկարմատ նախատիպ հիմքի վրա։ Նման կառուցվածքի բառերն ունեն երկու հիմնական տարբերակներ՝ հոդակապով, որ նշվում է + նշանով՝ R(B+B) և անհոդակապ (բաղադրիչների միջև + նշանի բացակայությունը ցույց է տալիս հոդակապ չլինելը)։ Այսպիսի բաղադրություններ են՝ անախտակիր. անայլայլ, անբարբառ. անբարեբեր և այլն։

Այս կառուցվածքի տարբերակ են նաև այն բաղադրությունները, որոնց մեջ R(BB)-ի փոխարեն ունենք R(SB) կամ R(BS), այսինքն՝ նախատիպ արմատների փոխարեն ածանցավոր նախանախատիպեր են դրված, ինչպես՝ անբարյացակամ, որի բանաձևն է R{[(BR) + B]}։

ե) R(BBB) և ավելի արմատական բաղադրիչներով նախատիպերը գործածական չեն, չնայած լիովին հնարավոր են անանձնաբռնաղատ. անէլեկտրաբոցավառիչ և այլն բաղադրություններ, որոնք խիստ արհեստական են։

զ) R(BBR), որի տարբերակներն են. 1. R[B(BR)], 2. R[(BB)R], 3. R[(B+B)R] և այլն։ Բաղադրությունների մեծ մասը վերջին երկու տարբերակների կառուցվածքն ունեն, ինչպես՝ անայլայլություն (2), անանձնասիրություն (3), անակնունելի (2), անբամբասելի (2), անաշխատասիրություն (3), անարծաթասիրություն (3), անբարեհամբուրություն (3) և այլն։

է) R(BBRRR) և հետագա վերջածանցմամբ ավելի շատ բաղադրիչներով կազմությունները հազվադեպ են։ Նման կառուցվածք ունի, օրինակ, անբարեկեցիկ բառը (կառուցվածքային-բառակազմական բանաձևը՝ R{[B + +(BR)]R}։

ը) R(RB), այսինքն ան- ժխտական ածանցը դրվում է նախածանցով մեկարմատ նախատիպի վրա. ինչպես՝ անապագա, անապացույց, անառողջ, անանդրադարձ, անբաղդատ։ Օրինակներից երևում է, որ առկա է R(R+B) տարբերակը։

թ) R(RBR), ինչպես՝ անապացուցելի, անառողջություն (հզվդ.), անանդրադարձիկ, անպարբերական, որոնց մեջ շատ են R[R+(BR)] տարբերակի կառուցվածքները։

ժ) R(RBRR), ինչպես՝ անարտադրողաբար, անապացուցելիություն, անապակենտրոնացում (հզվդ.)։

Հնարավոր են, իհարկե, նաև հետագա ածանցումներ, ինչպես՝ R(RBRRR) անարտադրողականություն, անարտադրողականորեն, անապագայնացում (հզվդ.), բայց նման բազմաբաղադրիչ բառերը քիչ են գործածական։

Նշված կառուցվածքներից բոլորը չէ, որ հավասարաչափ տարածված են։ որպես ընդհանուր օրինաչափություն կարելի է նշել, որ առավել տարածված

են վերջածանցավոր կառուցվածքները և տարածվածությունը հակառակ համեմատական է բաղմաձևությանը, այսինքն՝ ինչքան քիչ բաղադրիչներ է պարունակում տվյալ կաղապարը, այնքան այդ կառուցվածքի բառերը շատ են ու գործածական։ Առավել շատ տարածված են RB և RBR կառուցվածքի բաղադրությունները։

Այժմ քննենք RB և RS կառուցվածքի բաղադրություններն ըստ նախատիպ հիմքերի խոսքի մասային պատկանելության և բաղադրությունների բառակազմական նշանակությունների։

Դոյական նախատիպերով բաղադրություններ Տեսականորեն հայերենի բոլոր դոյականները կարող են ստանալ ան- ժխտական նախածանցը։ Նման բաղադրությունները «նախատիպի ցույց տված առարկան չունեցող» ընդհանուր բառակազմական նշանակության ածականներ են։

Շատ տարածված են RB կառուցվածքի (նախածանցով և արմատական դոյականով կամ հաճախ նաև դոյական-արմատով կազմված) բաղադրությունները։ Դրանցից են՝ անահ, անփառ, անհոգ, անամոթ, անբախտ, անգութ, անտաղանդ, անտեր, անփող և այլն։ Նման բառերի մի խոշոր մասը միայն բուն բառակազմական նշանակությամբ («նախատիպի ցույց տված առարկան չունեցող») չի օգտագործվում, և ստացել է փոխաբերական իմաստ կամ կիրառություն, ինչպես՝ անամպ, փխբ. «անթախիծ», անանուն, փխբ. «անհայտ, աննշան», անաստված, փխբ. «անգութ, անխիղճ», անարատ, փխբ. «մաքուր», անարծաթ, փխբ. «աղքատ», անգլուխ, փխբ. «անխելք», անսիրտ, փխբ. «անխիղճ, անգութ», անսանձ, փխբ. «անզուսպ» և այլն։ Բուն իմաստով գործածական բաղադրություններից են՝ անածանց, անհոդ, անհոլով, անհող, անհոլիվ, անձյուն, անհանապարհ, անհարպ, անսաղարթ, անսեռ և այլն։ Քննարկվող կառուցվածքի բաղադրությունների մի մասը ազատորեն կարելի է դիտել նաև որպես ածանցի հապավումով նախատիպ հիմքերից կազմված ձևեր։ Այսպես, օրինակ, անբախտ բաղադրությունը տեսականորեն կարող է դիտվել որպես ան-բախտավոր կազմության արդյունք՝ -ավոր ածանցի անկումով, անհույս բաղադրությունը՝ որպես ան-հուսալի||անհույս, անվտանգը՝ որպես ան-վտանգավոր||անվտանգ և այլն[2]։ Այդ մասին խոսք կլինի համապատասխան ածանցներով նախատիպ հիմքերը քննելիս։

Որպես դոյական նախատիպ հիմքեր RS կառուցվածքում հանդես են գալիս բազմապիսի բաղադրություններ. ինչպես՝

1. R(BR)—մեկ արմատով և մեկ ածանցով։ Նման կազմություններ են՝ անաղուն, անամրոց, անաչք, անարբուսք, անբաժին, անդիմակ, անելք, անսերունդ և այլն։

2. R(BRR)—մեկ արմատով և երկու ածանցով՝ անզգացմունք, անմնացորդ և այլն։

3. R(BB)՝ [նաև R (B + B)] անաղուհաց, անանցագիր, անբարբառ, անդասակարգ, անդիվանագետ, անեկամուտ և այլն։

4. R(BBR)՝ անվայրէջք։

5. R(RB)՝ անապագա, անապացույց, անպարագիծ, անվերադարձ և այլն։

Ան- նախածանցը արդի գրական հայերենում ի՞նչ ածանցներով կազմված դոյական նախատիպ հիմքերի հետ կարող է առավել շատ զուգորդվել։

---

2 Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 220։

ան–...–ակ՝ անտոմսակ. անթիակ. անդիմակ. անշրջանակ. անբլթակ և այլն։

ան–...–ական՝ անթվական. անօգնական և այլն[3]։

ան–...–ան. անկայուն, անիշխան. անփական. անպատվիրան և այլն։

ան–...–անք՝ անմխիթարանք. անտենչանք, անխղճմտանք. անհետևանք և այլն։

ան–...–ավոր՝ անթագավոր, անճգնավոր, անուղևոր և այլն։

ան–...–աստ, ան–...–արան. ան–...–աց. ան–...–իչ *կազմությամբ քիչ բաղադրություններ կան.* անիմաստ. անհենարան, անապաստարան. աննավագնաց *(հնց.)*, անթարթիչ, անհաղորդիչ.

Մեկ-երկուական օրինակներ կան նաև կազմված -իք, –յուն. –մունք. –որդ, –ոց *ածանց ունեցող նախատիպ հիմքերից.* անարգասիք, աներախտիք. անհընչյուն, անզգացմունք, անմնացորդ. անծածկոց *և այլն։*

ան–...–ություն R(S) *հարաբերությամբ նման բաղադրությունները գրական լեզվում քիչ են տարածված. առանձին օրինակներ անցել են խոսակցականից.* անշինություն *և այլն։*

Բավական շատ են ան–...–ում *կառուցվածքի բաղադրությունները.* անուսում, անզիջում, անզղջում, անջնջում *և այլն։*

Սահմանափակ թվով բառեր կազմված են –ույթ, –ուն. –ունդ. –ունք. –ուստ, –ուրդ *ածանց ունեցող նախատիպերով.* անշահույթ, աներևույթ, անկըթուն, անաղուն, անսնունդ, անսերունդ, անիրավունք:

ան–...–ք *կառուցվածքի բաղադրություններն ամենաշատն են։ Որպես նախատիպեր դրված են գերազանցապես միարմատ* –ք *ածանցով բաղադրություններ. ինչպես՝* անփառք, անպարտք, անելք, անաչք *և այլն։ Կան նաև՝* անհայրենիք, անվայրէջք:

Ածականական նախատիպերով բաղադրություններ. *Ժամանակակից հայերենում գործածական՝ արմատական որակական ածականների մեծ մասը ազատորեն ստանում է* ան– *ժխտական նախածանցը։ Նման* (RB) *կառուցվածքի բաղադրությունները ունեն «նախատիպի արտահայտած հատկանիշը չունեցող» (ոչ-) ընդհանուր բառակազմական նշանակությունը։ Օրինակ.* անարդար, անարի, անամոք, անապահով, անազնիվ, անազատ, անբերրի. անպայծառ. անսթափ, անսովոր *և այլն։ Այսպիսի որոշ բաղադրություններ, թեև գրական վկայություններ ունեն հայ նոր գրականության մեջ, սակայն սովորական համարվել չեն կարող. արդի գրականում դրանց փոխարեն ավելի հաճախ կարելի է հանդիպել հոմանիշ բառերի կամ բառակապակցությունների (անդալար, անբարի և այլն)։ Կան նաև շատ՝ արմատական արժեք ստացած երբեմնի բաղադիր նախատիպերով կազմություններ. ինչպես՝* անտխուր *և այլն։*

Ածականական նախատիպ հիմքերը կառուցվածքային տեսակետից ավելի բազմազան են։

1. R(BR)՝ անպլանային, անպահանջկոտ, անալի, անքաղաքավարի, անկարևոր *և այլն։*

2. R(BRR)՝ R[(BR)R] *տարբերակով՝* անպետքական, անգործնական, անմոռանալի, անմարդկային, անմերձենալի, անժողովրդական *և այլն։*

---

[3] *Նման կառուցվածքի* անկուսակցական *բաղադրությունը ունի «ոչ կուսակցական» իմաստ և ոչ թե «առանց կուսակցական»։*

3. R(BRRR)՝ անհամոզեցուցիչ, անզգայացուցիչ *և այլն (միայն բերված տեսակի բայական նախատիպ հիմքերով)։*

4. R(BB)՝ R[(BR)+B] *տարբերակով՝* անպերճասեր, անպնդակազմ, անպտղաբեր, աններողամիտ, անշահութաբեր *և այլն։*

5. R(BBB)՝ անզգաքթափանց *(քիչ գործածական)։*

6. R(BBR)՝ R[B(BR)] *և* R[B+(BR)] *տարբերակներով՝* անջերմանցիկ, անշրջահայաց, անոտնահարելի, աննավարկելի *և այլն։*

7. R(RB)՝ անստորագիր, անենթադատ *և այլն։*

8. R(RBB)՝ անընդդիմամարտ, անընդդիմակ *(երկուսն էլ հզվդ.)։*

9. R(RBR)՝ R[(RB)R], R[(R+B)R] *և* R[R(BR)] *տարբերակներով՝* անպարագրելի, անպարփակելի, աննախատեսելի, անտարափոխիկ, անհակաճառելի, անհամամասնական, անընդօրինակելի *և այլն։*

10. R(RBRR), *որ քիչ է տարածված՝* անվերաստանելի, անսրտադրողական:

Նշված կաղապարներից ամենագործածականներն են 1-ինը, 2-րդը, 4-րդը, 6-րդը և 9-րդը։ Մնացածներով կան սահմանափակ թվով բառեր։

Այժմ քննարկենք ածականական նախատիպ հիմքերը՝ նկատի ունենալով այն կազմող վերջին ածանցները։

ան-...-ալի‖ելի: *Այս ածական նախատիպ հիմքով բաղադրությունները ունեն «նախատիպի արտահայտած գործողությունը կատարելու կամ կրելու անկարող, անընդունակ» բառակազմական նշանակություն։ Այսպիսի կազմություններ են՝* -ալի *նախատիպով, որոնք համեմատաբար քիչ են՝* անորսալի, անվերջանալի, անտենչալի, անմոռանալի, անմերձանալի. -ելի *նախատիպով՝* աներազելի, անդիմադրելի, անբուժելի, անանցանելի, անբաժանելի, անհաղթելի, անհամատեղելի *և այլն։ Ինչպես երևում է բերված օրինակից,* ալի‖ելի *տարբերակների օգտագործումը պայմանավորված է նախանախատիպ բայի լծորդությամբ՝ անորոշի ձևում* -ել *վերջավորություն ունեցող բայերից՝* -ելի, ալ-*ով ձևերից՝* -ալի:

ան-...-ալի‖ելի *կազմության շատ բաղադրություններ ունեն անվերջածանց նախատիպ հիմքով կազմվող ձևեր, որոնք հաճախ նոր իմաստ կամ իմաստային երանգ են ստանում։ Հմմտ.՝ անտենչ‖անտենչալի, անմոռաց‖անմոռանալի, անդարձ‖անդառնալի, անբաժան‖անբաժանելի և այլն։*

ան-...-ալի‖ելի *կազմության բաղադրությունները «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» առաջին հատորի տվյալներով ան-ով կազմված բաղադրությունների կեսից ավելին են կազմում։*

ան-...-ակ՝ *գործողի անուն նախատիպերից՝* անգիտակ, անընդդիմակ, անհաջողակ, անմեղսագիտակ, անսխալակ *և այլն։*

ան-...-ական՝ *ա) նախորդ բաղադրությունների բառակազմական նշանակությամբ՝* անցնդական, անշահեկան, անշտապողական, անպետքական, անսազական *(հմմտ. ժող. անսխալական, անգնացական, անմնացական) և այլն։ բ) Նախատիպի արտահայտած հատկանիշը չունեցող բառակազմական նշանակությամբ՝* անբարոյական, աներաժշտական, անանձնական *և այլն։*

ան-...-ային՝ *նախատիպի իմաստի բացասման նշանակությամբ (ոչ-)՝* անսկզբունքային, անպլանային, անհեռանկարային: *Հմմտ. նաև՝* անմարդկային *(«հակամարդկային»)։*

ան-...-ավետ՝ *հատկանիշի բացասման նշանակությամբ՝* անարդյունավետ, անշահավետ, անհոտավետ, անօգտավետ *և այլն։*

ան-...-ավոր՝ *նույն նշանակությամբ՝* անբեղմնավոր, աներախտավոր, անարգասավոր, անարժանավոր, անկարևոր *և այլն։* Ավոր- *բաղադրիչով բարական և գոյականական նախանախատիպերից կազմված ածական նախատիպերով բաղադրություններ կազմելիս* -ավոր *ածանցը պետք է ընկներ. ինչպես՝* ողնաշարավոր *կենդանի-անողնաշար կենդանի,* թևավոր *հսկա-անթև հսկա։ Սակայն և՛ հնուց եկող, և՛ բազմաթիվ նոր կազմություններ կան, որոնց մեջ* -ավոր *ածանցը պահպանված է. օրինակ՝* անողնաշարավոր, աներ-պասավոր, անփառավոր, *հին՝* անհիմնավոր, անշնչավոր, անախտավոր, ան-կերպավոր, անվտանգավոր:

ան-...-իկ՝ *ա) «նախատիպի արտահայտած գործողությունը կատարելու անկարող» բառակազմական նշանակությամբ՝* անազդեցիկ, անբարեկեցիկ, անտարափոխիկ, անջերմանցիկ, անպայքուցիկ. *բ) հատկանիշի բացասման նշանակությամբ՝* անաշխարհիկ, անտոհմիկ:

ան-...-իչ՝ *նախատիպի արտահայտած գործողի հատկանիշի բացասման նշանակությամբ՝* անգոհացուցիչ, անհամոզիչ, անզգայացուցիչ *և այլն։*

ան-...-ող՝ անեերող, անգիջող, անկարող *և այլն։*

ան-...-ու՝ *«նախատիպի արտահայտած գործողության հատկանիշի ժխտման» նշանակությամբ՝* անակնկալու, անկաշառատու, անձեռնտու, անվերա-հասու *և այլն։*

ան-...-ուն՝ *«նախատիպի արտահայտած գործողությունը կատարելու կամ վիճակում լինելու անկարող» նշանակությամբ՝* անգործուն, անանուն, անհա-սուն, անխոնուն, անխոսուն, անդողդոջուն *(հզվդ.) և այլն։*

Նշված կառուցվածքի բաղադրությունների նախատիպերի մի մասը ունի անվերջածանց նախատիպ հիմքով ձևեր՝ երբեմն իմաստի տարբերակմամբ. ինչպես՝ անգզայուն||անգզա, անշարժուն||անշարժ, անհասուն||անհաս *և այլն։*

Կան նաև այլ՝ համեմատաբար քիչ օրինակներ ընդգրկող կամ ընդամենը մեկ-երկու բաղադրությամբ վկայված կառուցվածքներ, ինչպես՝ ան-...-ած (անմտածված, անկշռած, անզարգացած). ան-...-ակի (անուղղակի, անորոշակի). ան-...-ան (անբաժան, անարժան), ան-...-ատ (անգգաստ, աներկի-մատ). ան-...-արար (անբավարար, անտնարար), ան-...-աց (անշրջահա-յաց, անիմաց). ան-...-ի (անալի) ան-...-ին (անսարքին), ան-...-յա (անգոր-ծունյա), ան-...-ո (անբարո, անհանո), ան-...-ոտ (անվեհերոտ), ան-...-ուրդ (անկամուրդ. *հզվդ.*), ան-...-վարի (անճաղաճավարի) *և այլն։ Համմտ. նաև՝* ան-...-արիմ (անհավատարիմ), ան-...-իմ (անուշիմ), ան-...-կեր (անհամոզ-կեր), ան-...-ոն (անգգոն) *և այլն։*

Բայական նախատիպերով բաղադրություններ *Այսպիսի բաղադրություն-ներ կարող են կազմվել ինչպես բայարմատներով, այնպես էլ բայահիմքերով։ Այստեղ, բնականաբար, չեն քննարկվի այն բարդ նախատիպերը, որոնք կազմ-ված են վերջին բայական արմատով (վերահաս-, ջրատար-, քննադատ-) և ածական կամ գոյական են։ Ձենք քննարկի նաև հաբակատարի ու ենթակայա-կանի ձևերը։ Համեմատաբար շատ են այն զուտ բայական նախատիպերը, ո-րոնք կամ երկու բայական արմատից են բաղկացած, կամ արմատից ու նախածանցից և կամ էլ բայարմատից և բայական հիմքակազմ ածանցներից (անբամբաս-, անառակ-, անընդհատ-, անմոռաց- և այլն)։ Սրանք մեծ մա-*

սամբ ածական կամ մակբայ են և կամ էլ իրենց մեջ համատեղում են երկու խոսքի մասային կիրառություններն էլ։

1. Նախ քննարկենք արմատական բայական նախատիպ ունեցող բաղադրությունները։ Նման բաղադրություններն ունեն «նախատիպի արտահայտած գործողությունը կատարելու կամ կրելու անկարող, անընդունակ» ընդհանուր բառակազմական նշանակություն, ընդ որում՝ ժամանակը հասկացվում է խոսքի մեջ և ըստ այնմ էլ բաղադրությունները ստանում են ան–...–ող. ան–...–ած կամ ան–...–ելի բաղադրությունների նշանակություն։ Այսպիսի բաղադրություններ են՝ անդարձ, անել, անեղծ, անեփ. անշփոթ, անաշխատ, անանց, անրուժ և այլն։

Հիշյալ և նման բաղադրությունների մեծ մասը նաև մակբայներ են կամ էլ մակբայական կիրառություն ունեն. ինչպես՝ անդարձ (կորչել), անեփ (ուտել), անզարթ (մնալ, մեռնել), անգեղչ (վաճառել), անկարկամ (պատասխանել), անթաղ (մնալ), անխնա (ծախսել), անխոս (հեռանալ) և այլն։

ան+բայական բացարձակ հիմքը[4], նույն բառակազմական նշանակությամբ և կիրառությամբ՝ անլվա, անզգա, աներկբա և այլն։

2. Մի շարք բաղադրություններ կազմված են ան+գրաբարյան պատճառականի հիմք կաղապարով՝ անթաքույց, անմատույց, անհատույց[5]. նշված բոլոր երեք կաղապարների բաղադրությունները կարող են դիտվել նաև որպես վերջածանց. ինչպես՝ աներ կբա||աներ կբայելի և այլն։

3. ան–...–ում խոսակցականից գեղարվեստական գրականություն են անցել նաև ան– ժխտականով և անկատար դերբայի ձևով մի շարք բաղադրություններ, գերազանցապես մակբայական. ինչպես և ածականական կիրառությամբ[6]. ինչպես՝ անդադրում, անկշտում, անկոտրում, անհատնում, անհեծում, անհոգնում, անպատում։

Կարող է թվալ, թե գրական լեզուն դրանց նմանությամբ նոր բաղադրություններ է կազմում (անզիջում, անզոջում և այլն), սակայն իրականում վերջինները կամ ան+գոյական կառուցվածքի բաղադրություններ են, կամ էլ ընկալվում են որպես այդպիսին, եթե նախատիպը նույնանում է բայարմատ+ում(ն) կառուցվածքի բայանունների հետ. ինչպես՝ անընկում, անհատուցում, անհերքում, անմարում, անեներում, անջնջում, անզոջում, անզիջում և այլն։

Այժմ անդրադառնանք այն բաղադրություններին, որոնց մեջ ան–ը հանդես է գալիս որպես նախատիպ հիմքի առաջին բաղադրիչ։ Հիշեցնենք, որ այս խմբի բաղադրությունների կառուցվածքային բանաձևը կլինի SR, որտեղ S նախատիպ հիմքը, որպես պարտադիր բաղադրիչ, ունի ան– նախածանցը։ Ցույց տալու համար, թե հիշյալ կառուցվածքի բաղադրությունները որքան տարածված են, քննում ենք հիմնականում «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» 1-ին հատորի տվյալները, անհրաժեշտ դեպքում բա-

---

4 Տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 307։

5 Ուշագրավ է, որ «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի» 1-ին հատորում անհատույց բնութագրված է որպես ածական և մակբայ, անմատույց՝ ածական, իսկ անթաքույց՝ մակբայ, նկատի ունենալով քարտարանում եղած օրինակները։

6 Հմմտ. Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 257։

ուացանկը լրացնելով այլ բառարանների (հատկապես Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանի», Երևան, 1967) օրինակներով։

Քննվող կառուցվածքի բաղադրությունների մի փոքրիկ խումբ որպես երկրորդ բաղադրիչ ունի նախատիպ արմատ կամ այնպիսի նախատիպ հիմք, որի վերջին բաղադրիչը արմատական է։ Որպես ան– ածանցով նախատիպ հիմքեր հանդես են գալիս մի քանի բառ՝ անասուն–, անմահ–, անարգ–, անառակ–։ Բառակազմությանը, հասկանալի պատճառներով, ամենաշատ մասնակցում է անասն– նախատիպը (անասնաբույծ, անասնաբույծ, անասնագլխաքանակ, անասնագոմ, անասնախնամ և այլն)։ Անմահ– նախատիպով ունենք վերոհիշյալ կառուցվածքի անմահանուն բաղադրությունը (հոմանիշների բառարանից՝ անմահաբեր, անմահածաղիկ բսբ., անարգ– նախատիպով՝ քիչ գործածական՝ անարգալից, անարգակենցաղ, անարգակոծ, անարգահոգի, անարգամահ, անարգամիտ, անառակ– նախատիպով, որի մեջ առակ արմատը մթագնած է, մի քանի բառեր)։

Շատ են SR կառուցվածքի վերջածանցավոր բաղադրությունները։ ան–...–ություն նախատիպերը կազմված են հիմնականում որակական ածականներով, որոնք ցույց են տալիս նախատիպ ածականի արտահայտած հատկանիշի անունը. ինչպես՝ անաղարտություն, անանցություն, անզարդություն, անվախություն, անօրենություն, անսանձություն և այլն։ Բառակազմական նշանակությունն է «նախատիպ ածականով բնորոշվող վիճակ», ինչպես՝ անկրճտություն «անկուշտ լինելը», անընդունակություն «անընդունակ լինելը», հմմտ. նաև՝ անխրատություն «անխրատ լինելը», անվախություն «անվախ լինելը», անգիտություն «անգետ լինելը» և այլն։

Իմաստի յուրահատկություն են ի հայտ բերում այն բաղադրությունները, որոնց նախանախատիպ արմատը գոյական է. ինչպես՝ անահություն, անտաղանդություն, անվախություն, անփողություն և այլն։ Սրանք ցույց են տալիս նաև նախանախատիպ գոյականը չունենալը. ինչպես՝ անահություն «ահ չունենալը», անամոթություն «ամոթ չունենալը», անարժեքություն «արժեք չունենալը», անգործություն «գործ չունենալը» և այլն։ Որոշ բաղադրյալ ձևերում այդ իմաստը չկա, ինչպես՝ անսարքություն, աննավագնացություն և այլն։ Պատճառը պարզվում է, երբ քննում ենք նախատիպերը։ Անսարքություն բաղադրության մեջ նախանախատիպն է սարքին, այսինքն ածական է (և ոչ թե սարք), որից ան–...–ություն կաղապարով բաղադրությունը բնականաբար ունի «սարքին չլինելը, անսարք լինելը» նշանակությունները։ Աննավագնացություն բաղադրության մեջ նավագնաց հիմքը ունեցել է «նավարկելի» (ածականական) նշանակություն, որը և տվել է ան–...–ություն բաղադրությունը՝ «նավագնաց, այսինքն՝ նավարկելի չլինելը, աննավարկելի լինելը»։

ան–...–աբար։ Այս կաղապարի բոլոր նախատիպերը ան– նախատիպով ածականներ են։ Միակ բացառությունը իմաստային անցում կատարած անասուն բառն է, որը այժմ միայն գոյական է։ Բաղադրությունները արտահայտում են բայի՝ նախատիպ բառով բնորոշվող հատկանիշ։ Այսպիսի բաղադրություններ են՝ անծանոթաբար, անհաստատաբար, անընտրաբար և այլն։ Գոյական նախանախատիպերով ունենք՝ անիշխանաբար, անխորհրդաբար, անմահաբար և այլն։ Նախատիպ հիմքերի վերջին բաղադրիչը ան–...–աբար կառուցվածքի բաղադրություններում գերազանցապես բայական է, ինչպես՝ անհատաբար, անհամեմատաբար, անխնամաբար, անգիտաբար, անհենաբար

և այլն։ Մեկ-երկու բառերում ունենք բայական հիմք՝ անհետեղաբար, անարտադրողաբար, անմոռացաբար, անիմացաբար և այլն։ Անսովոր կազմություն է անհավանականաբար (նման հիմքերից սովորական են ան-...-որեն բաղադրությունները)։

Ան-...-ական։ Այս կաղապարով ածական բաղադրությունները կազմված են երկու կարգի նախատիպերով՝ գոյական (ունեն քիչ բառեր) և ածական։

Գոյական նախատիպերով բաղադրություններն ունեն «նախատիպին հատուկ վերաբերող» բառակազմական նշանակություն։ Այդպիսիք են՝ անասնական, անասնաբուժական, անասնաբուծական, անասնապահական։ Հմմտ. նաև՝ անհատական. որի հիմքը կարող է մեկնաբանվել և՛ որպես գոյականական, և՛ որպես ածականական (երրորդ՝ ան-հատական «չհատվող» մեկնությունը կեղծ է)։

Ածական նախատիպերից կազմված բաղադրությունները կարելի է բաժանել երկու խմբի. ա) որոնց մեջ -ական ածանցը մասամբ սատկական նշանակություն ունի. բաղադրությունները սովորաբար ունեն փոխաբերական կամ նաև փոխաբերական իմաստ. օրինակ՝ անզուգական «Զույգը, նմանը չունեցող, աննման», անհունական (հզվդ.) «մեծ քանակությամբ, շատ» և այլն։ բ) -ական ածանցի սովորական՝ «նախատիպի արտահայտած հատկանիշը ունեցող» նշանակությամբ բաղադրություններ՝ անաստվածական (հնց.), անարգական և այլն։

Կան ան-...-ական բաղադրություններ, որոնք գոյականներ են և ունեն «նախատիպի ցույց տված հասարակական խմբավորմանը՝ կազմակերպությանը, միությանը և այլն պատկանող» բառակազմական նշանակություն. ինչպես՝ անկախական (հնց.), անաստվածական (հմմտ. յակոբինական, միապետական և այլն)։

ան-...-ային նախատիպերը մեկ-երկուսն են և ունեն «նախատիպին հատուկ, վերաբերող» նշանակություն (անասնավանառային, անասնային)։ ան-...-անոց՝ գոյական նախատիպերից «տեղ, շենք և այլն, որ նախատեսված է, որտեղ լինում են նախատիպի ցույց տված գոյականները» (անկելանոց, անասնանոց, անառականոց)։ անարգ- բայական նախատիպից են կազմված անարգանք գոյականը և անարգիչ ածականը։ Անասնաբուժարան բաղադրությունը կարող է մեկնվել որպես՝ անասնաբուժ-արան, անասնա-բուժարան։

ան-...-ապես՝ կազմվում են մակբայներ, նույն բառակազմական նշանակությամբ, ինչ ան-...-աբար կաղապարով։ Նախատիպ հիմքի վերջին բաղադրիչը գրեթե միշտ արմատական է կամ գիտակցվում է որպես այդպիսին. ինչպես՝ անհավասարապես, անհաստատապես, անգիտապես, անպաշտոնապես և այլն։

Մեկ-երկու բաղադրություններում ունենք [R(BR)]- նախատիպ հիմք (աներևութապես, անարժանապես և այլն)։ Անհատականապես բաղադրությունը ունի [(RB)R]R կառուցվածք։

ան-...-իկ բաղադրությունները կազմվում են գոյական նախատիպերից, որոնց մեջ իկ-ը երբեմն նվազական կամ փաղաքշական իմաստ է տալիս նախատիպ գոյականներին։ Այդպիսի բաղադրություն է անասնիկ (հզվդ.)։ Բոլոր բաղադրությունները գոյականներ են։ ան- բաղադրիչ ունեցող ածական նախատիպերից փաղաքշական-մտերմական երանգով՝ անխոսիկ, անմեղիկ (հմմտ. անուշիկ, քաղցրիկ, լավիկ)։

ան-...-որեն: *Բառակազմական նշանակությունը նույնն է, ինչ* ան-...-ա-բար *բաղադրություններինը, ըստ որում, որոշ նախատիպ հիմքերով գերազանցական* -որեն *ածանցով բաղադրություններ են կազմվում։ Օրինակ՝* -արեն *ածանց են ստանում* ան-...-ելի *նախատիպերը. ինչպես՝* անեկարագրելիորեն, անբաժանելիորեն *և այլն։ Գերազանցական* -որեն *ածանցման են ենթարկվում* ան-...-ական *նախատիպերը.* (անմիջականորեն, անհատականորեն, անհավանականորեն, անվճռականորեն): *Նախընտրելի են նաև* ան-...-այն *և* ան-...-ացի *նախատիպերի* որեն- *ածանցումները* անմարդկայնորեն, անիրավացիորեն *և այլն։ Քիչ են* ան-...-ության *բաղադրությունները (*անասնապանության, անծանոթության):

Ան-...-ուկ: *Ածականական նախատիպերից կազմվում են՝ ա) ածականներ՝ փաղաքշական իմաստով. ինչպես՝* անմեղուկ. *բ) գոյական բուսանուններ, որ գրական լեզու են մտել խոսակցականից կամ կազմվել նրա նմանությամբ. ինչպես՝* անթևուկ, անմոռուկ *և այլն։*

Ան-...-ում: *Այս կաղապարի բառերի մեծ մասը կազմված է վերածության-դառնալիության*[7] *բայերից, որոնց նախատիպը* ան- *բաղադրիչով ածական է, ինչպես՝* անհամ-, անհայտ-, անհատական-, անմարդ-, անշարժ- *և այլն։ Նման հիմքով բառերից* ում-*ով բայանուն կազմվում է կատարյալի հիմքից՝* անմահացում, անհետացում, անհատականացում *և այլն։ Այսպիսի նախատիպերով ունենք՝* անշարժացում, անողոքացում, անէացում, անգոյացում, անգիտացում *և այլն։*

Բուն գործողություն ցույց տվող բայերից ան-...-ում *կաղապարի բայանուններ կազմվում են ներկայի հիմքի նախատիպ ձևերից՝* անտեսում, անարգում, անհիտում, անմեղսագրում *և այլն։ Հմմտ.՝* անտեսել||անտեսում *և* անտեսանալ||*անտեսացում (հզվդ.)։*

МОТИВИРОВАННЫЕ СЛОВА С ПРЕФИКСОМ ԱՆ- В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

С. А. ГАЛСТЯН

Резюме

Все слова с начальным формантом ան- делятся на две группы: а). Слова, в которых ան- является (R) префиксальным морфом мотивированного слова от мотивирующего корня (B) или основы (S). Морфемно-словообразовательная формула таких слов RB или RS. б). Слова, в которых префикс ան- начальный составной компонент мотивирующей основы—структурная формула (RB или RS) R.

Мотивирующие основы для слов первой группы — простые и мотивированные существительные, прилагательные, а также глагольные корни и основы. Мотивированные слова—прилагательные и существительные.

От мотивирующих основ с начальным префиксом ան- (структурная формула (RB)R или (RS)R—вторая группа) ան- мотивация осуществляется суффиксами -ական, -ային, -ապես, -արար, -իկ, -որեն, -ություն, -ուկ и -ում.

---

7 *Տե՛ս* Է. Աղայան, *նշվ. աշխ., էջ 231։*